

1.3. *Գներ և սակագներ*

**Գների փոփոխությունները 2006թ. հունվար-ապրիլին
ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների**

(նախորդ ամսվա նկատմամբ, %)

	Սպառողական գների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գների ինդեքսը շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս ⁶⁾
Հունվար	102.5 [◇]	97.8	100.3	99.1	99.1	101.4
Փետրվար	100.2 [◇]	99.2	100.1	100.0	101.5	101.6
Մարտ	100.1 [◇]	97.2	102.2	100.5	100.2	101.6
Ապրիլ	100.3	103.3	101.6	120.3	103.3	98.9
2006թ. ապրիլը 2005թ. դեկտեմբերի նկատմամբ	103.1	97.3	104.2	119.8	105.4	102.4
2006թ. հունվար-ապրիլը 2005թ. հունվար-ապրիլի նկատմամբ	98.5	96.1	104.3	103.7	106.4*	106.3*

*) 2006թ. ապրիլի և 2005թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության մարզերում 470 անվանում ապրանք-ծառայությունների գծով:

²⁾ Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք-ներկայացուցիչների գծով: Գների ինդեքսի հաշվարկը կատարվում է ժողովրդական ճյուղերի համամիութենական դասակարգչի (ՏՏԵՀԴ) համաձայն: Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին (ՏԳՏԴ) համապատասխան գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը մշակման փուլում է:

³⁾ Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:

⁴⁾ Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնափոխադրումների դիտարկված սակագների հիման վրա:

⁵⁾ Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

⁶⁾ Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

1) Հայաստանի Հանրապետությունում սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կշիռների և բազիսային տարվա փոփոխության մասին

Համաձայն սպառողական գների ինդեքսների (ՍԳԻ) հաշվարկման մեթոդաբանության, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում 2004թ. (2004թ. ապրիլի 1-ից 2005թ. մարտի 31-ը) տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված (ընտրանքային) հետազոտության արդյունքները, ինչպես նաև 2005թ. օրացուցային տարվա գնային փոփոխությունները, կատարվել է սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչների տեսակարար կշիռների վերահաշվարկ (քանզի հիշատակված հետազոտության արդյունքներով արձանագրվել էր սպառողական զամբյուղի բաղադրատարրերի էական փոփոխություն): 2006 թվականի սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար բազիսային տարի է ընդունվել 2005 թվականը (2002 թվականի փոխարեն):


2006 թվականից սպառողական զամբյուղում լրացուցիչ ներառվել է 70 ապրանք-ծառայություն (91 ապրանք-ծառայություն-ներկայացուցիչ): 2006թ. հունվարից ՍԳԻ-ի հաշվարկման համար դիտարկվող ապրանք-ծառայությունների քանակը 400-ի փոխարեն կազմում է՝ 470 (560 ապրանք-ծառայություն-ներկայացուցիչ):

Միաժամանակ, միջին հանրապետական ցուցանիշներում ներառվել է նաև Արարատի մարզը (Արտաշատ քաղաքը):

Սպառողական գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության փոփոխություններով պայմանավորված, 2006թ. հունվար-մարտ ամիսների ինդեքսները վերահաշվարկվել են:

Գների, սակագների աճի տեմպերը 2005-2006թթ. հունվար-ապրիլին


(Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, %)



Արտադրության շուկա: 2006թ. ապրիլին մարտի համեմատ հանրապետության սպառողական շուկայում արձանագրված 0.3% գնաճին զուգընթաց, արժույթային շուկայում գրանցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.2% նվազում: Ապրիլին 2005թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների և հաշվարկային փոխարժեքի հավելաճերը կազմել են համապատասխանաբար 3.1% և 0.1%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում սպառողական գների 2.8% հավելաճին զուգընթաց գրանցվել է հաշվարկային փոխարժեքի 7.9% նվազում: 2006թ. ապրիլին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 449.99 դրամ, ինչը գերազանցել է նախորդ տարվա ապրիլի համապատասխան ցուցանիշը 0.5% (447.89 դրամ):

ՀՀ սպառողական գների ինդեքսի և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 2005-2006թթ. հունվար-ապրիլին


(Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



Սպառողական գներ: 2006թ. ապրիլին շարունակվել է հանրապետության սպառողական շուկայում հունվար-մարտ ամիսներին արձանագրված գնաճի միտումը և չորս ամիսների ընդհանուր գնաճը կազմել է 3.1%:

2006թ. հունվար-ապրիլին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.8%, ինչը 0.1 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (0.7%):

Սպառողական գների հավելաճը 1997-2006թթ. ապրիլին
(Մախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)




Սպառողական գների փոփոխությունները 2006թ. ապրիլին

(%)

	2006թ.				հունվար-ապրիլ 2005թ. հունվար-ապրիլի նկատմամբ
	ապրիլ				
	2006թ. մարտի նկատմամբ	2005թ. ապրիլի նկատմամբ	2005թ. դեկտեմբերի նկատմամբ	2005թ. նկատմամբ	
Սպառողական գների ինդեքս այդ թվում	100.3	100.1	103.1	103.2	98.5
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	100.0	99.3	104.7	104.0	97.4
ոչ պարենային ապրանքների	101.0	103.3	101.0	102.9	101.9
ծառայությունների	100.4	103.8	101.4	102.0	103.4

ՀՀ սպառողական շուկայում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2006թ. հունվար-ապրիլին

(Մախորդ ամսվա նկատմամբ, %)



Պարենային ապրանքների գներ: 2006թ. ապրիլին մարտի համեմատ պարենային ապրանքների շուկայում արձանագրված գների անփոփոխ ընդհանուր մակարդակի պայմաններում դիտարկված պարենային 13 ապրանքախմբերից 8-ում գրանցվել է 0.1-26.7% գնաճ, 2-ում՝ 5.2-4.8% գնանկում, իսկ 3-ում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:


Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(%)

	2006թ.				հունվար-ապրիլ 2005թ. հունվար-ապրիլի նկատմամբ
	ապրիլը				
	2006թ. մարտի նկատմամբ	2005թ. ապրիլի նկատմամբ	2005թ. դեկտեմբերի նկատմամբ	2005թ. նկատմամբ	
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	100.0	99.3	104.7	104.0	97.4
Պարենային ապրանքներ	100.0	99.3	105.3	104.5	97.2
հացամթերք	100.0	96.9	100.4	98.5	96.5
մսամթերք	100.7	105.4	101.1	103.3	103.7
ձկնամթերք	126.7	122.2	173.9	160.8	83.9
կաթնամթերք	100.0	101.6	100.9	102.2	101.0
ձու	95.2	85.7	86.0	92.8	92.2
կենդանական և բուսական յուղ	100.6	99.8	100.4	99.9	98.6
միրգ	100.4	80.3	115.9	102.6	79.8
բանջարեղեն և կարտոֆիլ	94.8	108.4	132.1	126.2	104.4
շաքարավազ	108.0	126.3	126.5	127.1	112.4
սուրճ, թեյ, կակաո	100.0	103.3	101.3	104.0	103.5
հրուշակեղեն	100.1	100.5	100.4	100.4	100.5
այլ մթերք	100.1	114.6	100.8	111.6	114.8
ոչ ոգելից խմիչք	100.2	102.9	100.5	100.9	103.4
<i>Ոգելից խմիչք և ծխախոտ</i>	100.0	100.5	100.2	100.3	100.5

Հացամթերքի, այդ թվում հացի և ալյուրի գների փոփոխությունները 2003-2006թթ.

(2002թ. նկատմամբ, %)



2006թ. ապրիլին 2005թ. դեկտեմբերի համեմատ ձկնամթերքի ապրանքախմբում գրանցվել է 73.9% գնաճ, այդ թվում, ապրիլին մարտի համեմատ ձկնամթերքի գներն աճել են 26.7%, ինչը հիմնականում «Սիգ» տեսակի թարմ ձկան 33.1% գնաճի արդյունք է: Հանրապետության դիտարկված 11 քաղաքներում արձանագրվել է ձկնամթերքի 3.4-34.6% գնաճ, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է մայրաքաղաքում:

2006թ. հունվար-ապրիլ ամիսներին հանրապետությունում արձանագրվել է շաքարավազի 26.5% ընդհանուր գնաճ, այդ թվում, ապրիլին մարտի համեմատ՝ 8.0% գնաճ: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում ապրիլին արձանագրվել է շաքարավազի 6.7-11.0% գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Թալինում: Մայրաքաղաքում շաքարավազի գինն աճել է 7.6%:


Սսամթերքի ապրանքախմբում 2006թ. ապրիլին մարտի համեմատ գրանցվել է 0.7% գնաճ, ինչը հիմնականում ոչխարի (9.3%) և տավարի (2.6%) մսի գնաճի արդյունք է: Խոզի մսի գինը նշված ժամանակահատվածում աճել է 0.4%: Հանրապետության դիտարկված 10 քաղաքներում գրանցվել է մսամթերքի 0.1-3.3% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է ք. Թալինում): Մայրաքաղաքում մսամթերքի գներն աճել են 0.3%, իսկ ք. Կապանում արձանագրվել է 0.1% գնանկում:

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Մրգի ապրանքախմբում 2006թ. ապրիլին մարտի համեմատ հանրապետությունում գրանցվել է 0.4% գնաճ: Նշված ժամանակահատվածում արձանագրվել է նռան 3.2%, ինչպես նաև ներմուծված (ցիտրուսային և արևադարձային) մրգից՝ ադամաթզի (2.0%), նարնջի (3.9%), մանդարինի (11.1%) գնաճ: Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում արձանագրվել է մրգի 0.3-5.8% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ գրանցվել է ք. Արտաշատում), իսկ 3-ում՝ 4.5-2.4% գնանկում: Մայրաքաղաքում գրանցվել է մրգի 0.5% գնաճ:

Մրգի գների փոփոխությունները 2004-2006թթ. հունվար-ապրիլին


(նախորդ ամսվա նկատմամբ, %)



2006թ. ապրիլին մարտի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում արձանագրվել է 5.2% գնանկում: Նշված ժամանակահատվածում արձանագրվել է կանաչ սոխի (29.1%), վարունգի (15.6%), կաղամբի (12.3%), կարտոֆիլի (5.9%), գլուխ սոխի (4.7%) գնանկում: Միաժամանակ, հանրապետությունում 5.1-44.0% աճել են լոլիկի, գազարի, ճակնդեղի գները: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում գրանցվել է բանջարեղենի և կարտոֆիլի 11.6-0.8% գնանկում, այդ թվում, գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք.Վանաձորում: Մայրաքաղաքում բանջարեղենի և կարտոֆիլի գները նվազել են 4.1%:

Բանջարեղենի գների ամսական փոփոխությունների դինամիկան 2004-2006թթ. հունվար-ապրիլին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)



Ոչ պարենային ապրանքների գներ: 2006թ. ապրիլին 2005թ. դեկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 1.0% գնաճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0.2% նվազման դիմաց:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները


(%)

	2006թ.				հունվար-ապրիլը 2005թ. հունվար-ապրիլի նկատմամբ
	ապրիլը				
	2006թ. մարտի նկատմամբ	2005թ. ապրիլի նկատմամբ	2005թ. դեկտեմբերի նկատմամբ	2005թ. նկատմամբ	
Ոչ պարենային ապրանքներ	101.0	103.3	101.0	102.9	101.9
<i>այդ թվում՝</i>					
հագուստ և գործվածք	100.5	102.2	101.4	102.2	100.8
վառելիք	99.4	99.6	99.8	101.3	98.3
կահույք	100.1	101.3	100.7	102.0	99.9
գորգեղեն	100.2	101.5	100.5	100.9	101.0
տեքստիլեղեն	100.5	100.6	101.0	100.5	100.0
կենցաղային էլեկտրաապրանքներ	100.2	101.7	100.4	99.7	100.6
խոհանոցային սպասք	100.1	102.0	100.5	100.9	101.4
լվացամիջոցներ	103.9	110.7	105.7	107.7	106.7
շինանյութեր	101.4	104.5	102.3	105.2	103.2
այգեգործական ապրանքներ	106.5	109.1	107.1	107.6	104.1
դեղամիջոցներ	99.9	97.6	99.8	98.7	97.2
անձնական օգտագործման մեքենաներ և բենզին	102.1	111.8	99.1	105.4	111.7
նշակույթի ապրանքներ	100.3	102.9	100.7	103.5	101.9
գրենական պիտույքներ	100.5	106.2	100.7	103.6	105.8
զեղահարդարման ապրանքներ	100.0	100.1	100.3	100.3	100.0
ոսկերչական ապրանքներ	101.3	131.1	122.9	128.2	123.8
անձնապիտո ապրանքներ	100.4	99.9	100.4	98.7	99.2

2006թ. ապրիլին մարտի համեմատ հանրապետությունում արձանագրվել է բենզինի 1.9% գնաճ, իսկ դիզելային վառելիքի գինը նշված ժամանակահատվածում նվազել է 0.5%: Ապրիլին 2005թ. համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գնաճը կազմել է համապատասխանաբար՝ 6.2% և 1.6%, իսկ 2005թ. ապրիլի համեմատ՝ 13.7% և 5.3%:

Բենզինի և դիզելային վառելիքի գների փոփոխությունները 2003-2006թթ.

(2002թ. նկատմամբ, %)



Ծառայությունների սակագներ. 2006թ. ապրիլին 2005թ. դեկտեմբերի համեմատ ծառայությունների ոլորտում գրանցվել է սակագների 1.4% հավելաճ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է սակագների 0.4% նվազում):

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

(%)

	2006թ.				հունվար-ապրիլ 2005թ. հունվար-ապրիլի նկատմամբ
	ապրիլ				
	2006թ. մարտի նկատմամբ	2005թ. ապրիլի նկատմամբ	2005թ. դեկտեմբերի նկատմամբ	2005թ. նկատմամբ	
Ծառայություններ, ընդամենը	100.4	103.8	101.4	102.0	103.4
<i>այդ թվում՝</i>					
կենցաղային բնույթի	100.1	101.6	100.5	101.2	101.9
բնակարանային-կոմունալ	101.3	103.0	101.3	102.0	102.0
բուժապաստարկման	100.1	101.6	100.1	100.3	101.7
տրանսպորտի	100.4	104.6	100.9	101.5	104.2
կապի	100.1	115.1	115.1	103.6	112.1
մշակույթի	101.6	109.9	102.1	111.4	109.7
կրթության համակարգի	100.0	109.3	100.2	105.4	108.5
հանգստի կազմակերպման	99.4	104.8	100.2	99.3	103.6
հանրային սննդի	100.2	104.2	101.0	102.0	104.0
իրավական և բանկային	100.0	101.3	100.2	100.7	101.3

Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում 2006թ. ապրիլին մարտի համեմատ սպառողական գներն աճել են 0.1-0.7% (գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Թալիհում): Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 0.3%: Ք. Մարտունիում արձանագրվել է 0.3% գնանկում, իսկ ք. Եղեգնաձորում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

2006թ. ապրիլին մարտի համեմատ հանրապետության դիտարկվող քաղաքներից 6-ում արձանագրվել է պարենային ապրանքների 0.1-1.2% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է ք. Թալիհում), իսկ 5-ում՝ 1.2-0.3% գնանկում:

ՀՀ հետազոտվող բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2006թ. ապրիլի 28-ի դրությամբ

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չուր, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
ՀՀ, ընդամենը	1562	1333	1646	621	485	322	187	291	120	397
<i>այդ թվում՝</i>										
Երևան	1558	1346	1664	632	484	319	200	286	114	446
Գյումրի	1544	1350	1643	654	506	328	173	259	88	320
Վանաձոր	1550	1266	1495	563	541	313	163	312	165	362
Վաղարշապատ	1600	1300	1620	560	470	320	174	300	150	300
Թալիհ	1750	1400	1700	600	500	350	185	300	130	300
Դիլիջան	1600	1250	1800	600	500	334	150	350	150	300
Հրազդան, Չարենցավան	1600	1380	1650	620	500	325	170	300	150	280
Եղեգնաձոր	1650	1300	1500	600	500	320	150	300	100	300
Մարտունի	1500	1300	1600	650	450	330	150	300	100	400
Կապան	1400	1340	1660	656	500	342	168	320	138	300
Արտաշատ	1550	1260	1580	580	410	320	180	275	100	375

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2006թ. ապրիլի 28-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 6964 դրամ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Թալիհում՝ 7215 դրամ, իսկ ամենացածրը՝ ք. Եղեգնաձորում՝ 6720 դրամ), ինչը 3.5% գերազանցել է նույնաժամանակյա պարենաբաղադրանքների 2005թ. ապրիլի 29-ին արձանագրված ընդհանուր արժեքը (6728 դրամ):

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2006թ. ապրիլին մարտի համեմատ գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.1-2.2% գնաճ, այդ թվում, համեմատաբար բարձր գնաճ գրանցվել է ք. Վանաձորում: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գներն աճել են 1.1%:

2006թ. ապրիլին մարտի համեմատ հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում գրանցվել է ծառայությունների սակագների 0.3-0.9% հավելաճ, ընդ որում, համեմատաբար բարձր հավելաճ գրանցվել է ք. Գյումրիում: Մայրաքաղաքում ծառայությունների սակագների հավելաճը կազմել է 0.3%:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսները 2006թ. ապրիլին ըստ դիտարկվող քաղաքների (2005թ. նկատմամբ, %)

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում				
		սպառողական ապրանքների	դրանցից			ծառայությունների
			պարենային ապրանքների	ոգելից խմիչքի և ծխախոտի	ոչ պարենային ապրանքների	
ՀՀ, ընդամենը	103.2	103.8	104.5	100.3	102.9	102.0
<i>այդ թվում՝</i>						
Երևան	103.3	104.2	104.9	100.2	103.5	101.4
Գյումրի	104.0	103.8	105.2	100.4	101.1	104.4
Վանաձոր	104.0	103.8	104.7	100.5	102.5	104.5
Վաղարշապատ	103.1	103.4	103.6	100.7	103.7	102.4
Թալին	103.4	104.0	105.0	100.2	102.3	101.9
Դիլիջան	103.0	103.7	104.6	102.0	101.8	101.2
Հրազդան, Չարենցավան	102.5	103.2	103.6	100.3	103.1	100.9
Եղեգնաձոր	102.2	102.5	103.1	100.6	101.5	101.5
Մարտունի	101.9	102.1	102.4	100.0	102.2	101.2
Կապան	102.4	101.8	101.4	100.7	103.7	103.6
Արտաշատ	103.2	102.9	104.4	100.6	99.3	103.9

Արդյունաբերողների արտադրանքի գներ: 2006թ. ապրիլին 2005թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրված արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի 2.7% գնանկումը 3.4 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (6.1% գնանկում):

Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի (նախորդ ամսվա նկատմամբ, %)


	2 0 0 6թ.				
	ապրիլը				հունվար-ապրիլը 2005թ. հունվար-ապրիլի նկատմամբ
	2006թ. մարտի նկատմամբ	2005թ. ապրիլի նկատմամբ	2005թ. դեկտեմբերի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Ամբողջ արդյունաբերությունը	103.3	99.5	97.3	147.4	96.1
<i>այդ թվում՝</i>					
էլեկտրաէներգետիկա	93.4	98.7	89.2	90.9	100.0
գունավոր մետալուրգիա	106.7	96.7	91.6	302.6	85.9
քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն	97.5	101.3	100.4	129.5	102.9
մեքենաշինություն	109.1	116.6	107.3	115.1	114.2
այլ արդյունաբերական արտադրություն (ոսկերչական արդյունաբերություն)	101.9	109.7	99.1	130.2	114.7
անտառային, փայտամշակման, թղթի-ցելյուլոզի արդյունաբերություն	101.2	104.3	104.7	109.2	109.5
շինանյութերի արդյունաբերություն	109.0	128.8	116.5	147.8	122.2
թեթև արդյունաբերություն	100.0	107.7	120.2	126.0	104.7
սննդի (ներառյալ ալյուրի ու համակցված կերերի) արդյունաբերություն	104.9	97.9	105.5	125.0	99.3
պոլիգրաֆիական արդյունաբերություն	88.3	93.2	83.9	94.5	100.9

Բեռնափոխադրումների սակագներ: 2006թ. ապրիլին մարտի համեմատ հանրապետությունում արձանագրվել է բեռնափոխադրումների սակագների 20.3% հավելաճ, ինչը մեծապես պայմանավորվել է խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների 47.3% հավելաճով: Օդային և ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները նշված ժամանակահատվածում նվազել են համապատասխանաբար 0.2% և 0.1%, իսկ երկաթուղային տրանսպորտում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

2006թ. ապրիլին 2005թ. ապրիլի համեմատ բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 121.5%, այդ թվում, երկաթուղային տրանսպորտով՝ 101.4%, ավտոմոբիլայինով՝ 102.6%, օդայինով՝ 113.2%, խողովակաշարային տրանսպորտով՝ 144.3%, իսկ հունվար-ապրիլին 2005թ. հունվար-ապրիլի համեմատ՝ համապատասխանաբար 103.7%, 98.1, 104.5, 106.9, 105.7%:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գներ: 2006թ. ապրիլին 2005թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է գյուղատնտեսական մթերքի իրացման 5.4% գնաճ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել է 7.1% գնանկում), այդ թվում, բուսաբուծական մթերքի իրացման գները նշված ժամանակահատվածում աճել են 21.9%, իսկ անասնապահական մթերքի գծով գրանցվել է 1.5% գնանկում:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսները ՀՀ մարզերում 2006թ. ապրիլին ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի (նախորդ ամսվա նկատմամբ, %)



Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման միջին գները ՀՀ-ում 2002-2006թթ. ապրիլին

		(դրամ)				
	Չափի միավորը	2002	2003	2004	2005	2006
Ցորեն	կգ	102	98	158	110	95
Գարի	- ,, -	97	96	150	103	118
Լոբի	- ,, -	368	397	311	350	579
Կարտոֆիլ	- ,, -	129	137	61	69	104
Կաղամբ	- ,, -	48	70	40	54	70
Գազար	- ,, -	100	50	100	88	92
Գլուխ սոխ	- ,, -	137	146	300
Խնձոր	- ,, -	194	167	167	187	196
Տանձ	- ,, -	180	200	240	...	350
Խաղող	- ,, -	...	400
Ընկույզ (կեղևով)	- ,, -	754	806	1000

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Չափի միավորը	2002	2003	2004	2005	2006
Մեղր	- „,-	2500	2124	2500	2441	2845
Միս տավարի	- „,-	878	966	1050	1132	1296
ոչխարի	- „,-	923	988	1092	1119	1448
խոզի	- „,-	956	941	1407	1530	1489
Կաթ	լ	100	103	105	107	107
Մածուն	- „,-	177	173	176	185	177
Պանիր (յուղոտ)	կգ	796	779	858	864	874
Չու	հատ	42	42	46	46	46
Միամյա խոտեր	կգ	19	22	29	20	25
Բազմամյա խոտեր	- „,-	31	20	40	28	34

... _ դիտարկված տնտեսություններում իրացում (վաճառք) չի կատարվել

2006թ. ապրիլին 2005թ. ապրիլի համեմատ գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը կազմել է 110.0%, այդ թվում, բուսաբուծական մթերքինը՝ 122.2%, անասնապահական մթերքինը՝ 107.0%, իսկ հունվար-ապրիլին 2005թ. հունվար ապրիլի համեմատ՝ համապատասխանաբար 106.4%, 117.8 և 103.5%:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներն ըստ ՀՀ մարզերի

(%)

	Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը		Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը	
	2006թ. ապրիլին		2006թ. ապրիլին	
	2006թ. մարտի նկատմամբ	2005թ. ապրիլի նկատմամբ	2006թ. մարտի նկատմամբ	2005թ. ապրիլի նկատմամբ
ՀՀ, ընդամենը	103.3	110.0	98.9	105.5
<i>այդ թվում</i>				
Արագածոտն	108.9	119.3	101.8	107.9
Արարատ	91.3	97.6	101.4	105.8
Արմավիր	105.0	109.6	102.3	104.9
Գեղարքունիք	98.3	115.7	100.3	100.5
Լոռի	100.8	101.7	101.2	106.5
Կոտայք	92.0	109.0	103.3	109.7
Շիրակ	101.4	111.9	100.9	103.6
Սյունիք	100.9	102.4	98.7	106.3
Վայոց ձոր	109.8	115.6	101.1	105.0
Տավուշ	102.1	101.5	99.2	107.2